Արձանագրություն N 5

Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27.12.2023թ.

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

- Դավիթ Մկրտումյան

Հանձնաժողովի անդամներ՝

- Հերիքնազ Մանուկյան
- Մերի Եղիազարյան

Քարտուղար՝ Լիլիթ Գևորգյան

«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Armeps համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
4. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին.
5. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի վերագնահատում իրականացնելու որոշման մասին.
6. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 Ըստ **www.armeps.am** կայքի տվյալների՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար «Ներքին աուդիտի ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակիցների անվանում
1	ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ
2	Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Armeps համակարգի միջոցով ներկայացված հայտերում հրավերով պահանջված փաստաթղթերի առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 **Armeps** համակարգի միջոցով ներկայացված բոլոր մասնակիցների էլեկտրոնային հայտերում բացակայում են հրավերով պահանջվող (նախատեսված) **փաստաթղթեր՝ մասնավորապես.** ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայում է՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորները (առնվազն թվով 5) պետք է ունենան Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում, աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ, և վերոնշյալ աուդիտորներից առնվազն մեկը պետք է ունենա ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորման (Certified Internal Audit - CIA) վկայական կամ Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (the Association of Chartered Certified Accountants - ACCA) լիիրավ անդամի վկայական և միաժամանակ հայտը ներկայացնելու պահին Կատարողի մոտ առնվազն երեք ամսվա աշխատանքային փորձ: սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, ինքնակենսագրություն) պատճենները: Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայում է՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորները (առնվազն թվով 5) պետք է ունենան Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում, աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ, և վերոնշյալ աուդիտորներից առնվազն մեկը պետք է ունենա ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական

ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորման (Certified Internal Audit - CIA) վկայական կամ Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (the Association of Chartered Certified Accountants - ACCA) լիիրավ անդամի վկայական և միաժամանակ հայտը ներկայացնելու պահին Կատարողի մոտ առնվազն երեք ամսվա աշխատանքային փորձ: սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր, ինքնակենսագրություն) պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

3. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկած գները

3.1 « ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում **Armeps** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման արդյունքում մասնակիցների գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ՝ 1 *Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար «Ներքին աուդիտի ծառայություններ»*		
	Գնման գինը՝ 7 924 800		
	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ	3.250.000 /երեք միլիոն երկու հարյուր հազար /	650.000 /վեց հարյուր հիսուն հազար/	3.900.000 /երեք միլիոն ինը հարյուր հազար/
Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ	15.000.000 /տասնհինգ միլիոն/	3.000.000 /երեք միլիոն/	18.000.000 /տասնութ միլիոն/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

4. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին.

4.1 «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով սույն արձանագրության 2.2 կետը և հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 41-րդ կետը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ-ին և Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ին առաջարկելով մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները, հակառակ դեպքում մերժել վերը նշված մասնակցի հայտերը հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

4.2 « ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2023/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ-ին և Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ին սույն որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

5. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի վերագնահատում իրականացնելու որոշման մասին.

5.1 Հաշվի առնելով, որ սույն գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրով սահմանված 5-րդ բաժնում նշված՝ ծառայությունների համար ներգրավված աուդիտորների նվազագույն թվաքանակի պահանջը հրավերում սահմանված չի եղել որպես հայտը ներկայացնելու պարտադիր պահանջ (նկատի ունենալով, որ նշված պահանջը անհրաժեշտ է ապահովել ծառայության մատուցման սկզբից մինչև ավարտը, և դրա վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացվեր ոչ թե հայտը ներկայացնելու պահին, այլ մինչև պայմանագրի կնքումը և ծառայությունների մատուցման սկիզբը)՝ 27.12.2023թ-ի նիստի ընթացքում քննարկվեց ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի վերագնահատման հարցը, գնահատող հանձնաժողովի կողմից որոշում ընդունվեց իրականացնել հայտերի վերագնահատում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0

6. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

6.1 Գլոբ Աուդիտ ՍՊԸ-ն և Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ -ն սահմանված ժամկետում ներկայացրել են համապատասխան տեղեկությունները:

6.2 « ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց.

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2024/5» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-ին:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:
- Հրավերով սահմանված ժամկետում ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկ «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Դ. Մկրտումյան

հանձնաժողովի անդամներ՝

_____ Հ. Մանուկյան

_____ Մ. Եղիազարյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ. Գևորգյան